

<b>[1] Դուրս գրման ամսաթիվ</b>		
20	Սեպտեմբեր	2019 թ.
<b>[4] Մատուցման ամսաթիվը</b>		
20	Սեպտեմբեր	2019 թ.

**Հաշիվ վավերագիր**  
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

<b>[2] Սերիա</b>		<b>[3] Համար</b>
Բ		6788420319
Ճշգրտվող հաշիվ վավերագրի		
Սերիա	Համար	
Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		

<b>Պայմանագիր</b>	<b>[5] Կնքման ամսաթիվ</b>	<b>[6] Համար</b>
	20 Սեպտեմբեր, 2019 թ.	Բ6788420319

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**  
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>								
<b>[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)</b>	0	0	1	2	4	1	0	5
<b>[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>								
<b>[10] Անվանումը</b>	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
<b>[11] Բանկային տվյալները</b>	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ N 2474602078940000							
<b>[12] Գտնվելու վայրը (հասցեն)</b>	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ							
<b>[13] Լրացուցիչ տվյալներ</b>								

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>								
<b>[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)</b> (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
<b>[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>								
<b>[16] Անվանումը</b>	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
<b>[17] Բանկային տվյալները</b>	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011002160							
<b>[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)</b>	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ Փ. 46/5							
<b>[19] Լրացուցիչ տվյալներ</b>								
<b>[20] Ում միջոցով</b>	<b>Անուն, ազգանուն</b>		<b>Համար</b>					
	<b>Լիազորագիր</b>		<b>Ամսաթիվ</b>					

<b>[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը</b>						
№/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդամենը ծավալը կամ ծանրանկաշիքները	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 13144015	րոպե	2265	83.33		188742.45
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 16809115	րոպե	220	83.33		18332.6
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 09102816	րոպե	1600	83.33		133328
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-գերմաներեն-հայերեն թր. գործ թիվ 61207815	րոպե	1545	116.67		180255.15
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 10107416	րոպե	4180	83.33		348319.4
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 37100916	ժամ	71	5000		355000
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 16116916	ժամ	69	5000		345000
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն թր. գործ թիվ 09111616	րոպե	3680	116.67		429345.6
9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն թր. գործ թիվ 13132616	ժամ	61	7000		427000

10	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն- ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 16815114	ըուպե	8320	83.33	693305.6
Ընդամենը					3118628.8

Ծառայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

SHAHINYAN VARDUHI 7803710425

Ծառայություն  
(աշխատանք)  
ստացող

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/09/2019 10:02:21



Կատարող  
«ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ

գտնվելու վայրը՝ ք. Երևան, Բաղրամյան 62 բն 48  
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ  
Հ/Հ 2474602078940000  
ՀՎՀՀ 00124105

Պատվիրատու  
ՀՀ ՔՆՆԶԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,  
Հ/Հ 900011002160  
ՀՎՀՀ 02631263

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 049**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«20» «սեպտեմբերի» 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԹԱՐԳՄԱՆԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «20» «սեպտեմբերի» 2019 թ.

Պայմանագրի համարը՝ N՝ Բ6788420319

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ Քննչական Կոմիտեի գլխավոր քարտուղար՝ Ա.Նիկոյանի և Կատարողն՝ ի դեմս «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Շահինյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «20» «սեպտեմբերի» 2019 թ. գուրս գրված N՝ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 13144015	2265 թույե	2265 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	188,74	3-րդ եռամսյակ
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 16809115	220 թույե	220 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	18,33	3-րդ եռամսյակ
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 09102816	1600 թույե	1600 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	133,33	3-րդ եռամսյակ
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-գերմաներեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-գերմաներեն-հայերեն քր. գործ թիվ 61207815	1545 թույե	1545 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	180,26	3-րդ եռամսյակ
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 10107416	4180 թույե	4180 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	348,32	3-րդ եռամսյակ
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 37100916	71 ժամ	71 ժամ	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	355	3-րդ եռամսյակ
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 16116916	69 ժամ	69 ժամ	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	345	3-րդ եռամսյակ
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն քր. գործ թիվ 09111616	3680 թույե	3680 թույե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	429,35	3-րդ եռամսյակ




9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն քր. գործ թիվ 13132616	61 ժամ	61 ժամ	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	427	3-րդ եռամսյակ
10	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 16815114	8320 րոպե	8320 րոպե	3-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	693,31	3-րդ եռամսյակ

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

  
 ստորագրություն  
**Վ ՇԱՀԻՆՅԱՆ**  
 ազգանուն, անուն  
 Վ.Տ.  


Ծառայությունն ընդունեց

  
 ստորագրություն  
  
 ազգանուն, անուն  
 Վ.Տ.  


## ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. սեպտեմբերի 20-ին կնքված N Բ6788420319 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ. սեպտեմբերի 20-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը
Թարգմանչական ծառայություն	1	դրամ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝



Արթուր Գրեկիջյան  
ազգանուն, անուն

Ստորագրություն



Արթուր Գրեկիջյան  
ազգանուն, անուն

Ստորագրություն

Ռ Ր Ո Շ Ո Ւ Մ  
քրեական գործի վարույթին թարգման ներգրավելու մասին  
29.06.2015թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ա.Ս. Մխիթարյան: քննարկելով վերոյիշեցված քննիչ թիվ 13144015 քրեական գործի նյութները

Պ Ա Ր Ձ Ե Յ Ի

Այժմի վահրամի կգարթվյանը ՀՀ ոստիկանության կհհհհ վարչությունում հադորդում է տվի սյն մասին, որ «Լոկալ Դիվիզիոն» ՍՊ ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև 30.11.2012թ. կնքված քաղաքի գերակա հանրային շահ ճանաչված Երևան քաղաքի Պուշկինի 4 հասցեում տեղի ընդհանուր սնվակահանություն հանդիսացող 702.6 քմ. մակերեսով անշարժ գույքը գնելու պայմանագրի կատարման շրջանակներում «Լոկալ Դիվիզիոն» ՍՊ ընկերության քննչության կտրից գույքի սնվակահանակների վնասի հատուցման «Անիկոն» ՍՊ ընկերության հանձնարարված գույքի գնահատման գործընթացի ժամանակ, նշված կազմակերպության տնօրեն Գևորգ Գրիգորյանը և գնահատման մասնագետ Գևորգ Ստեփանյանը, իրենց կարգադրիչ և սյլ կազմակերպությունները կազմակերպության շահերին հակառակ և «Լոկալ Դիվիզիոն» ՍՊ ընկերության օրին օգտագործելով, առանց համապատասխան հետազոտություններ կատարելու և սնվակահանակների քանակի վերաբերյալ կնդ լույսըներ մտցնելով՝ 2014թ. նոյեմբերի 15-ին կազմել են անշարժ գույքի գնահատման հաշվետվություն, որտեղ ընդհանուր 203.2 քմ. նստահարկ տան արժեքը կնքված 180. քմ. հողատիրաժքի սղծերը, որի արդյունքում Ա. կգարթվյանին պատճառով է ծանր հետազոտություն հադորդման առթիվ 2015թ. ապրիլի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 214 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 13144015 քրեական գործը և կատարվում է նախարարություն:

Միևսի տնենագրել, որ անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել որպես վկա Աշոտ Գեորգյանին, իսկ վերջինս չի տիրապետում գրավոր հայերեն լեզվին, ուստի նկնելով վերոգրյալից և վերաբերելով ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածի պահանջներից.

Ռ Ր Ո Շ Ե Յ Ի

1. Թիվ 13144015 քրեական գործով, որպես թարգման ներգրավել «Յինյուու» ՍՊ ընկերության թարգմանի՝ Մնուշ Սուրենի Լուսինյանին:
2. Ծաղարան Անուշ Սուրենի Լուսինյանին պարգևատրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի կրավորներին ու պարտականությունները, նախագահացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
3. Արաշախե թարգման Անուշ Լուսինյանին միջոցով ծանոթացնել Անուշ Լուսինյանին Գառնիային և վերջինս պուշտպան Արմեն Սուխիկարյանին:

Ավագ քննիչ՝

Ա. Ս. Մխիթարյան

Վերադարձվել է մեղադրանքի

## ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 13853017 քրեական գործով

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և  
Նորք Մարաշ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա. Ս. Մխիթարյանիս,  
վարույթում քննվող թիվ 13144015 քրեական գործով 29.06.2015 թվականին որպես  
թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի թարգմանիչ Անուշ Խանիկյանին, ով  
սույն քրեական գործի շրջանակներում կատարել է բանավոր թարգմանություն  
հայերենից ռուսերեն և հակառակը՝ 37 ժամ 45 րոպե տևողությամբ:

Քննիչ՝



Ա. Ս. Մխիթարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
թարգմանիչ հրավիրելու մասին

ք. Երևան

26.01.2016թ.

Մալաթիա-Սեմբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության լեյտենանտ Ե.Ա.Պետրոսյան, վերանայելով վարույթիս տակ գտնվող թիվ 16809115 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

2015 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել Վարդուհի Համբարձումի Ասատրյանը այն մասին, որ նույն օրը ժամը 16:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Արարատյան 1-ին զանգվածի 10/2 շենքի 33 բնակարանում կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ եղբայրը՝ Սամվել Համբարձումի Ասատրյանը ձեռքբերով և ոտքով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Պեպքի առթիվ 28.12.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 16809115 քրեական գործը

Նախաքննությամբ անրաժեշտություն է առաջացել որպես տուժող հարցաքննել Ելենա Մելինչուկին:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ Ելենա Մելինչուկը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:


Հաշվի առնելով, որ Ե.Մելինչուկը չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, և ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր հրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 16809115 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել <<Ֆինլուու>> ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին՝ ծնված 02.05.1954թ. բնակվող ք.Երևան Մ.Պապյան փողոց 4 տուն, վկայական համար 022, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չչահագրգռված անձ է:
2. Թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

Մալաթիա-Սեմբաստիա վարչական  
շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ



Ե.Ա.Պետրոսյան

Թարգմանիչ



Գ.Շիրմազանյան

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**/թիվ 16809115 քրեական գործով/**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության լեյտենանտ Ե. Ա. Պետրոսյանիս վարույթում քննվող թիվ **16809115** քրեական գործով 26.01.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավված «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Շիրմազանյանին, ով սույն քրեական գործով կատարել է 3 ժամ 40 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

**Ավագ քննիչ՝**



**Ե. Ա. Պետրոսյան**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

« 02 » փետրվարի 2016թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Յ.Բ.Հայրապետյանս, վերանայելով թիվ 09102816 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ-ի հունվարի 13-ին՝ ժամը 18:05-ին շտապ օգնության Արաբկիր ենթակայանից հաղորդում է ստացվել, որ թիվ 15 բրիգադան Ծ.Աղբյուր 23/1 հասցեում բուժօգնություն է ցույց տվել հարբածություն և գանգուղեղային բաց վնասվածք ունեցող Կոլյա Թովմասի Դանիելյանին, որը հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Նույն օրը՝ ժամը 20:15-ին Կ.Դանիելյանը «Գ.ՈՒ.Տ, ուղեղի ցնցում, ալկոհոլային հարբածություն» ախտորոշմամբ տեղափոխվել է «Սուրբ Գր. Լուսավորիչ» ԲԿ, որտեղ գիտակցության չգալով մահացել է:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Կ.Դանիելյանի մայր՝ Լաուրա Արամայիսի Կարապետյանը, և ընկերները՝ Տիգրան Սպարտակի Գրիգորյանը և Սուրեն Ռաֆայելի Միրզոյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ 12.01.2015թ-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում Ծ.Աղբյուր 23/1 տան մոտակայքում Կոլյա Դանիելյանն ինքնազգացողությունը վատանալու հետևանքով վայր է ընկել՝ ստանալով մարմնական վնասվածք:

Համաձայն Կոլյա Դանիելյանի մահվան մասին բժշկական վկայականի՝ մահվան պատճառ է հանդիսացել՝ գլխուղեղի կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումը, գանգուղեղային փակ, բութ վնասվածքը:

Դեպքի առթիվ 2016թ.-ի հունվարի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09102816 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել քրեական գործով իրենց հայտնի հանգամանքների շուրջ հարցաքննել վկա Տիգրան Սպարտակի Գրիգորյանին, ով պարզվել է, որ չնայած ազգությամբ հայ է, բավարար չափով տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ունի ռուսերեն լեզվի կրթություն և տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի՝ գործով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, ով կարող է թարգմանել հայերեն գրավոր լեզվից հայերեն բանավոր և ռուսերեն գրավոր, բանավոր լեզուներին և ընդհակառակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 09102816 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին /ծնված՝ 02.05.1954թ., հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, աշխատում է «Ֆինլոու» ՍՊ ընկերությունում որպես ռուսերեն լեզվի թարգմանիչ, հաշվառված է՝ ք.Ստեփանավան, Ս.Պապյանի 4 տանը, փաստացի բնակվում է՝ ք.Երևան, Ա.Հովհաննիսյան փողոցի 22 շենքի 12 բնակարանում, անձնագիր AM 0552160/, ով տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություն հայերեն գրավոր, բանավոր լեզվից՝ ռուսերեն գրավոր, բանավոր լեզուներին և ընդհակառակը:


**ՏԵՂԵԿԱՆՔ**  
Թիվ 09102816 քրեական գործով

07.10.2016թ.

ք. Երևան

Տրվում է սույն տեղեկանքն առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ք.Հայրապետյանիս վարույթում քննվող թիվ 09102816 քրեական գործով 02.02.2016թ. որպես թարգմանիչ ներգրավված «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը կատարել է 26 ժամ 40 րոպե տևողությամբ հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն:

Քանաքեռ-Զեյթուն վարչական  
շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ



Հ.Ք. Հայրապետյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
Թարգմանիչ ճանաչելու մասին

14-ր մարտի 2016թ.

ք. Էջմիածին

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության  
Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Մ.Շահբազյանս, քննարկելով վարույթումս  
քննվող թիվ 61207815 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Յ Ի

2015 թ-ի հուլիսի 1-ին Ֆրանկ Մատչաստեկին Գերմանիայի Դաշնային  
Հանրապետությունից ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության  
Վաղարշապատի բաժնի պետին հաղորդում է հասցեագրել, որ 2014 թվականի  
դեկտեմբեր ամսին իր ծանոթ, Արմավիրի մարզի Պտղունք գյուղի բնակիչ Միշել  
Սառկոյանին է հանձնել իրեն պատկանող, 70.000 ԱՄՆ դոլար բնօրինակ  
արժողության տարրեր տեսակի կենցաղային ապրանքներ՝ մինչև իր Գերմանիայից  
վերադառնալը պահելու համար, սակայն վերադառնալուց հետո չի կարողացել  
վերցնել այդ ապրանքները, քանի որ Միշել Սառկոյանը հրաժարվել է իրերը տալուց:

Դեպքի առթիվ 16.12.2015թ. ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցվել է թիվ  
61207815 քրեական գործը, ՀՀ քր.օր. 322-րդ հոդվածի 1-ին մասով և ուղղարկվել է  
Վաղարշապատի քննչական բաժին՝ որի նախաքննության կատարումը 11.01.2016թ.  
հանձնարարվել է ինձ:

Քրեական գործի նյութերը թարգմանելու նպատակով ուղարկվել են ՀՀ քննչական  
կոմիտե:

Նկատի ունենալով, որ քրեական գործի նյութերի թարգմանությունը կատարելու  
համար անհրաժեշտ է թարգմանիչ ճանաչել, ղեկավարվելով ՀՀ քրեական  
դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Յ Ի

1.Թիվ 61207815 քրեական գործով թարգմանիչ ճանաչել „Ֆին-Լոու.. ՍՊԸ-ի  
աշխատակից գերմաներեն լեզվի մասնագետ Տիգրան Արմենի Գրիգորյանին:

2.Տ.Գրիգորյանին պարգարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ  
հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև  
նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական  
օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝  Մ.Շահբազյան

Թարգմանիչ՝



Տ.Գրիգորյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տվյալ տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ Մ" Շահբազյանիս վարույթում քննված թիվ 61207815 քրեական գործով 17.03.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավված «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Տիգրան Գրիգորյանը կատարել է 25 ժամ 45 րոպե տևողությամբ գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն բանավոր թարգմանություն:

Քննիչ՝



Մ. Շահբազյան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Գործով թարգման ներգրավելու մասին

« 24 » մարտի 2016 թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ա. Ք. Խաչատրյանս, վերանայելով վարույթիս թիվ 10107416 քրեական գործի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի փետրվարի 1-ին Հովհաննես Լյուրիսի Հակոբյանը (ծնված՝ 12.06.1972թ.-ին, բնակվող՝ ք. Երևան Մ. Սելիքյան փ. 13/7 տ.) ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2014 թվականի մայիս ամսին դիմել է «Վերածնունդ ինվեստ» ՍՊԸ-ի տնօրեն Արման Աշոտի Գրիգորյանին՝ շինարարական վարկ ձևակերպելու նպատակով և այդ գործարքը կատարելու համար Երևան քաղաքի Դավթաշեն 1-ին փողոցի 18-րդ շենքի 12-րդ բնակարանում վճարել է 450.000 դրամ, սակայն Ա. Գրիգորյանը խաբեությամբ տիրացել է այդ գումարին և վարկ չի դասավորել կամ տրամադրել:

Փաստի առթիվ 2016 թվականի փետրվարի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 10107416 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Արման Աշոտի Գրիգորյանին, ով տիրապետում է միայն հայերեն բանավոր լեզվին, սակայն չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 10107416 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության լիազորված թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին:
2. Թարգման Գագիկ Շիրմազանյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝




Ա. Ք. Խաչատրյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տվյալ տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Աջափնյան և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի վարույթում քննված թիվ 10107416 քրեական գործով 24.03.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավված «Ֆինլու» ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը կատարել է 69 ժամ 40 րոպե տևողությամբ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն բանավոր թարգմանություն:

Քննիչ՝



Ա. Խաչատրյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

29.03.2016թ.

ք. Եղեգնաձոր

«Վ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության փոխգնդապետ Հ. Պողոսյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 37100916 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի ՝

01.03.2016թ. «Վ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչությունում «Վ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված թիվ 37100916 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Տավուշի մարզի Տավուշ գյուղի բնակիչ Արայիկ Զաքարյանը և Երևան քաղաքի բնակիչ Արթուր Հովհաննիսյանը, ինչպես նաև քրեական գործով ինքնությունները չպարզված երկու այլ անձինք, նախնական համաձայնության գալով միմիայնց հետ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արմեն Բաբլոյանի և վերջինիս մերձավոր ազգականների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով նրանից առանձնապես խոշոր չափի 20.010.000 ՀՀ դրամ գումարին համարժեք 3 միլիոն Ռուսաստանի Դաշնության ռուբլի իրենց հանձնելու վերաբերյալ, 2016 թվականի փետրվարի 28-ին՝ ժամը 21:40-ի սահմաններում, Արմեն Բաբլոյանի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով Արմեն Բաբլոյանից պահանջել են իրենց հանձնել 3 միլիոն ռուսական ռուբլի: Այն է.

Ռուսաստանի Դաշնության Խաբարովսկ քաղաքի բնակիչ Արմեն Բաբլոյանը Խաբարովսկ քաղաքում զբաղվել է շինարարական բիզնեսով: 2015 թվականի աշնանից սկսած Ռուսաստանի Դաշնությունում Արայիկ Զաքարյանը և Արթուր Հովհաննիսյանը նախնական համաձայնության գալով միմիայնց հետ՝ Արմեն Բաբլոյանից 3 միլիոն ռուսական ռուբլի գումար շորթում կատարելու վերաբերյալ, Ռուսաստանի Դաշնությունում սկսել են պարբերաբար նրա և նրա ընտանիքի անդամներին, նաև վերջինիս գույքը ոչնչացնելու սպառնալիքներ կատարելով, ապօրինաբար պահանջել են իրենց հանձնել 3 միլիոն ռուսական ռուբլի, սակայն Արմեն Բաբլոյանը հրաժարվել է կատարել նրանց անօրինական պահանջները: 2015 թվականի դեկտեմբերի 13-ին Արմեն Բաբլոյանը ընտանիքի անդամների հետ եկել է Հայաստանի Հանրապետություն: 2016 թվականի փետրվարի 28-ին Արմեն Բաբլոյանը կնոջ՝ Զլատա Բուրբեյինայի և երեքամյա դստեր՝ Լիա Բաբլոյանի հետ գտնվել են Հայաստանի Հանրապետության Եղեգնաձոր քաղաքի Մոմիկի 6/17 հասցեում գտնվող հայրական տանը: Նույն օրը՝ ժամը 21:40-ի սահմաններում, Արայիկ Զաքարյանը և Արթուր Հովհաննիսյանը, նրանց հետ ինքնությունները չպարզված երկու այլ անձինք, թակել են բնակարանի մուտքի դուռը, իսկ երբ Արմեն Բաբլոյանը բացել է մուտքի դուռը, նրանք չորսով Արմեն Բաբլոյանի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքներ տալով պահանջել են իրենց հանձնել 3 միլիոն ռուսական ռուբլի և փորձել են ներս խուժել: Արմեն Բաբլոյանը և բնակարանի ներսում գտնվող Զլատա Բուրբեյինան սկսել են օգնություն կանչել: Իսկ երբ Զլատա Բուրբեյինան հայտարարել է, որ կատարվածի մասին հայտնել է ոստիկանությանը և ոստիկանները գալիս են, Արայիկ Զաքարյանը և Արթուր Հովհաննիսյանը, նրանց հետ ինքնությունները չպարզված մյուս երկու անձինք, Արմեն Բաբլոյանի և նրա մերձավոր ազգականների հասցեին սպառնալիքներ տալով պահանջելով իրենց հանձնել 3 միլիոն ռուսական ռուբլի, դիմել են փախուստի:

«Վրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանք կատարելու կասկածանքով Արայիկ Արարատի Չաքարյանը 01.03.2016թ.՝ ժամը 19:45-ին, ձերբակալվել է:

«Վրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանք կատարելու կասկածանքով Արթուր Սոկրատի Հովհաննիսյանը 01.03.2016թ.՝ ժամը 20:30-ին, ձերբակալվել է:

03.03.2015թ. Արայիկ Արարատի Չաքարյանը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղսագրվել է «Վրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք:

03.03.2015թ. Արթուր Սոկրատի Հովհաննիսյանը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղսագրվել է «Վրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք:

03.03.2016թ. Արայիկ Չաքարյանի և Արթուր Հովհաննիսյանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտ է քննչական-դատավարական գործողություններ կատարել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ջլատա Բուրբելինայի հետ, ով հայերեն գրավոր և բանավոր լեզվին չի տիրապետում, տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին: Ուստի, անհրաժեշտ է Ծովինար Խոսրովի Թորոսյանին, ով տիրապետում է հայերեն և ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ունի համապատասխան լիազորագիր և ով քրեական գործով չչափազրգուցված անձ է, հրավիրել որպես թարգմանիչ՝ Ջլատա Բուրբելինայի նկատմամբ քննչական-դատավարական գործողություններին մասնակցելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 37100916 քրեական գործով Ծովինար Խոսրովի Թորոսյանին հրավիրել որպես թարգմանիչ՝ նրան պարզաբանելով «Վրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ստացա որոշման օրինակը,  
պարզաբանվել է «ՔԴՕ 83-րդ հոդ. նախատեսված  
իրավունքներն ու պարտականություններն:

Թարգմանիչ՝

Ծովինար Թորոսյան

29.03.2016թ.

ՏԵՂԵԿԱԼՔ  
/թիվ 37100916 քրեական գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց Ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ  
ավագ քննիչ Հ. Պողոսյանս, վարույթումս քննվող թիվ 37100916 քրեական գործով  
29.03.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի  
թարգմանիչ Օսվինար Թորոսյանին, ով սույն քրեական գործի շրջանակներում  
կատարել է թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը՝ 71 ժամ  
սևտրությամբ:

Քննչական վարչության բաժնի  
ՀԿԳ ավագ քննիչ



Հ. Պողոսյան

Որոշում  
թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

13 ապրիլի 2016թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան Գ.Սաղոյանս, վերանայելով վարույթիս թիվ 16116916 քրեական գործի նյութերը,

Պարզեցի

2016թ. ապրիլի 12-ին ոստիկանության գործերի թիվ 1033 գործառնախ ծառայող Իգոր Թովմասյանը ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը, ժամը 00:35-ին Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցում գտնվող „Սաֆիր,, գիշերային ակումբի նկատելով վիճաբանող անձանց, մոտեցել է նրանց ու փորձել է կարգի հրավիրել, սակայն այդ անձինք իր օրինական պահանջներին չեն ենթարկվել, իսկ նրանցից մեկը, նստելով ԲՄՎ մակնիշի, 98 PP 088 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, այն հետընթաց վարել է իր ուղղությամբ, ավտոմեքենայով հարվածել իրեն, ապա դիմել փախուստի: Հարվածի արդյունքում ինքն ստացել է ոտքի կոտրվածք:

Ի.Թովմասյանի զեկուցագրի առթիվ ոստիկանության Մալաթիայի բաժնում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2016թ. ապրիլի 12-ին, ժամը 00:00-ից 00:30-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցում գործող „Սաֆիր,, գիշերային ակումբի բակում Արման Վաչագանի Հովհաննիսյանը, Արսեն Վաչագանի Հովհաննիսյանը և Մանվել Միշայի Մեսրոպյանը վիճաբանել են նույն ակումբի անվտանգության աշխատակիցների հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Դեպքի առթիվ 2016թ. ապրիլի 12-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 16116916 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել „Սաֆիր,, գիշերային ակումբի անվտանգության աշխատակից Նարեկ Դաբադյանին, սակայն պարզվել է, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում դատավարության լեզուն հայերենն է, իսկ Ն.Դաբադյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

որոշեցի

1. Թիվ 16116916 քրեական գործով Նարեկ Դաբաղյանի հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրել „Ֆինլուս“, ՍՊԸ-ի կողմից լիազորված թարգմանիչ Անուշ Սուրենի Խանիկյանին:

2. Որոշումը ծանոթացնել Ա.Խանիկյանին, նրան պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ավագ քննիչ  Գ.Սահոյան

Որոշումը հայտնված է ինձ 13 04 2016թ.: Միաժամանակ ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին

թարգմանիչ  Ա.Խանիկյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

/թիվ 16116916 քրեական գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության  
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ  
Գ.Սաղոյանս, վարույթումս քննվող թիվ 16116916 քրեական գործով 13.04.2016  
թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի  
աշխատակից Անուշ Սուրենի Խանիկյանին, ով սույն քրեական գործով  
կատարել է 69 ժամ տևողությամբ բանավոր թարգմանություն հայերենից  
ռուսերեն և հակառակը:

ՀՀ քննչական կոմիտեի  
Երևան քաղաքի քննչական վարչության  
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի  
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Գ.Սաղոյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ ներգրավելու մասին**

Մ.Տ. 09111616

20 ապրիլի 2016թ.

ք. Երևան

**«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ա.Մ.Քոչարյանս, քննարկելով Մանուշեր Յեղուկահի Ալիփուրի հաղորդման հիման վրա նախապարաստված նյութերը.**

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2016թ.-ի մարտի 30-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, անհայտ անձը, թիվ 23 երթուղային ավտոբուսի մեջ, Մանուշեր Յեղուկահի Ալիփուրի պայուսակից գաղտնի հափշտակել է ընդհանուր խոշոր չափի՝ 27.234 « դրամին համարժեք 50 Եվրո արժողության դրամապանակը, որի մեջ եղել են 1.198.318 « դրամին համարժեք 2.200 Եվրո գումար, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «<DBK>> և Իրանի Հանրապետության «<Մելաթ>> բանկերի պլաստիկ քարտեր, նույնականացման քարտ, վարորդական իրավունքի վկայական և զեղչի քարտեր:

Դեպքի առթիվ 06.11.2015թ-ին «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում «Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09111616 քրեական գործը և կատարվել է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Մանուշեր Յեղուկահի Ալիփուրին և Նասրին Ալիոեզա Նոուզարին չեն տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում են պարսկերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածի պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**


1.Վարույթիս թիվ 09111616 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Հերոս Ղարամանի Դիդարյանտին /անձնագիր AA 0002221, տրված 15.03.2013թ. 002-ի կողմից/, որին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով և նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝**



**Ա.Մ.Քոչարյան**

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝



20 ապրիլի 2016թ.

## ՏԵՂԵԿԱԼՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա.Մ.Քոչարյանս, Մանուշեր Ալիփուրի հաղորդման հիման վրա նախապարրաստված նյութերով հարուցված թիվ 09111616 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թարգմանիչ Հերոս Ղարամանի Դիդարյանը, ով հանդիսանում է «ՖԻՆԼՈՂԻ» ՍՊԸ-ի աշխատակից, թիվ 09111616 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 20.04.2016 թվականին և սույն քրեական գործի շրջանակներում կատարել է 61 ժամ 20 րոպե ընդհանուր տևողությամբ հայերենից պարսկերեն և հակառակը բանավոր թարգմանություններ:

Քննիչ՝



Ա.Մ.Քոչարյան

03.06.2015թ.

«ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Հերոս Ղարամանի Դիդարյանտին որպես թարգմանիչ հրավիրելու մասին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Վ.Գ.Պողոսյանս, քննարկելով վարույթիս թիվ 13132616 քրեական գործերի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Յ Ի

2016 թվականի մարտի 11-ին ԻԻՀ քաղաքացի Արշիա Ամիրի Մոնջեզին հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում այն մասին, որ նույն օրը ժամը 19:00-ի սահմաններում Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայում իր ծանոթ Վահիդ Բարայի Ռեզան անհիմն վիճարանել է իր հետ և հարվածներ հասցրել դեմքի շրջանում՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Դեպքի առթիվ նախապատրաստված նյութերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 13132616 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ նախաքննությամբ գործով անցնող դատավարության կողմեր հանդիսացող, տուժողը, վկան, կասկածյալը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում են պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Յ Ի

Թիվ 13132616 քրեական գործով հրավիրել «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Հերոս Ղարամանի Դիդարյանտին / ծնված 23.06.1962թ., անձնագիր՝ AA 0002221, տրված 002-ի կողմից, 15.03.2013թ./, ով տիրապետում է հայերեն, պարսկերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ

Վ. Պողոսյան

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականություններ: Միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


Թարգմանիչ

Հ. Դիդարյանտ

Տեղեկանք

Ես՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Գ.Պողոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթիս թիվ 13132616 քրեական գործով «Ֆին Լոու» ՍՊ ընկերության պարսկերեն լեզվի թարգմանիչ՝ Հերոս Դիդարյանտը նույն քրեական գործով կատարել է 61 ժամ պարսկերեն բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ,  
արդարադատության կապիտան՝



Վ.Գ. Պողոսյան

ՈՐՈՇՈՒՄ  
Քարգմանիչ հրավիրելու մասին

Երևան

06 մայիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան Գ.Սաղոյան, վերանայելով վարույթիս թիվ 16815114 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2014թ. դեկտեմբերի 1-ին Աշոտ Սարգսի Միքայելյանը ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ շուրջ 2 ամիս առաջ վերավարկավորման նպատակով դիմել է «Վերածնունդ ինվեստ», ՍՊԸ-ին և նշված ընկերության տնօրեն Արման Աշոտի Գրիգորյանն ու աշխատակիցներ Ռուբեն Հովհաննիսյանը, Արթուր Սարուխանյանը, Մովսես Կարճիկյանը վերավարկավորում կատարելու պատրվակով իրենից վերցրել են 1.200.000 ՀՀ դրամ գումար և խարդախությամբ հափշտակել այն:

Դեպքի առթիվ 2014թ. դեկտեմբերի 9-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 16815114 քրեական գործը:


Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Արման Գրիգորյանին, սակայն պարզվել է, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում դատավարության լեզուն հայերենն է, իսկ Ա.Գրիգորյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 16815114 քրեական գործով Արման Գրիգորյանի հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես քարգմանիչ հրավիրել «Ֆինլու» ՍՊԸ-ի կողմից լիազորված քարգմանիչ Անուշ Սուրենի Խանիկյանին:

2.Որոշումը ծանոթացնել Ա.Խանիկյանին, նրան պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները, նախազուշացնել ակնհայտ սխալ քարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ավագ քննիչ  Գ.Սաղոյան

  Ն. Զեւեմիկյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

/թիվ 16815114 քրեական գործով/

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ արդարադատության կապիտան Գ. Սաղոյանի» վարույթում քննվող թիվ 16815114 քրեական գործով 06.05.2015 թվականին որպես թարգմանիչ ներգրավված «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանը սույն քրեական գործի շրջանակներում կատարել է 138 ժամ 40 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

«Քննչական կոմիտեի  
Երևան քաղաքի քննչական վարչության  
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի  
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Գ.Սաղոյան